ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«10» հունվարի 2022թ. №

«Ֆակտոր տեղեկատվական կենտրոն»
հկ լրագրող Նարեկ Կիրակոսյանին

Հարգելի՛ Նարեկ Կիրակոսյան

Ի պատասխան Ձեր՝ 28.12.2021թ. տեղեկատվություն ստանալու հարցման հայտնում ենք հետևյալը.

ՀՀ ԱԺ նախագահին սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներից հաճախ խափանվել է BMW մակնիշի ծառայողական ավտոմեքենան: Բազմակի խափանումներ եղել են ինչպես Երևանում, այնպես էլ մարզային այցերի ժամանակ, մասնավորապես Կոտայքում, Գյումրիում, Տավուշում: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ վերանորոգումից հետո մեքենան լիարժեք շահագործման ենթակա չի եղել, քանի որ ունեցել է մաշվածության և տեխնիկական անվտանգության բազմաթիվ խնդիրներ, ինչպես օրինակ՝ ղեկային կալոնը, փոխանցման տուփը և «Տուրբո» շարժիչը: Ավտոմեքենայի տեխնիկական սպասարկումն իրականացրել է «Եվրոմոթորս» ընկերությունը:

Տրանսպորտային միջոցներից նորով փոխարինվել է միայն ԱԺ նախագահին սպասարկող ծառայողական BMW մակնիշի ավտոմեքենան:

Էլեկտրոմոբիլների ձեռքբերման հետ կապված քննարկումներ կան, բայց դեռևս վերջնական որոշում չկա:

Հարգանքով՝

Վահան Նարիբեկյան

0095, Երևան, Մ. Բաղրամյան պող., 19 Հեռ.՝ 529695